



Հաստատված է

«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ
 2026թ.-ի որոշմամբ
 /արձանագրություն թիվ 8 /
 Խորհրդի նախագահ
 Ա.Արրանյան

**«ԳԼԱԶՈՐ ՈՒՎԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
 ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ
 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**
 (Խմբագրություն 02)

Մշակեց	Պաշտոն*	Անուն Ազգանուն	Ստորագրություն
	Վարկային բաժնի պետ	Ի. Աղաբաբյան	
Համաձայնեցված է	1. Ներքին իրավական ակտերի ստեղծման, մշակման, փոփոխություններ և լրացումներ կատարելու համար ստեղծված հանձնաժողով		
	Պաշտոն	Անուն Ազգանուն	Ստորագրություն
	Գործադիր տնօրենի օգնական աշխատակազմի գծով	Ա. Մանուկյան	
	Գլխավոր հաշվապահի տեղակալ	Ս. Գրիգորյան	
	Վերստուգող	Ա. Ղազարյան	
	2. Գործադիր տնօրեն	Ա. Դարբինյան	

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ	3
1.1 Կանոնակարգի նպատակն ու կիրառման շրջանակը.....	3
1.2 Օրենսդրական հիմքեր.....	3
1.3 Հիմնական հասկացություններ.....	3
Գլուխ 2. Հաղորդակցման ընդհանուր կանոններ	6
Գլուխ 3. Հաճախորդի հետ հաղորդակցման ընթացակարգը	6
3.1 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցումը մինչև պայմանագրի կնքումը.....	6
3.2 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցումը պայմանագրի կնքման ընթացքում, Վարկային պայմանագրում ներառվող նվազագույն տեղեկատվությունը.....	9
3.3 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցումը պայմանագրի գործողության ընթացքում.....	13
3.4 Պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդին տրամադրվող քաղվածքները.....	15
3.5 Ընկերության և հաճախորդի հաղորդակցումը պայմանագրի գործողության դադարման ընթացքում.....	16
Գլուխ 4. Երաշխավորի հետ հաղորդակցման կանոնները, կիրառման եղանակներն և ընթացակարգը	16
Գլուխ 5. Եզրափակիչ դրույթներ	17
Հավելված 1	19

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Կանոնակարգի նպատակը և կիրառման շրջանակը

1.1.1 Սույն կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) նպատակն է «Գլաժոր ՈւՎԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) բարելավել հաճախորդների հետ հարաբերություններում Ընկերության վարվելակերպի կանոնները, ապահովել հաճախորդների շահերի պաշտպանությունը և սահմանել գործարար վարվելակերպի կանոնների նկատմամբ նվազագույն պահանջները, այդ թվում Ընկերության և հաճախորդների միջև հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները, որոնք՝

- ապահովում են ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 8/05-ի («Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները») և կանոնակարգ 8/06-ի («Երաշխավորի հետ գործարար վարվելակերպի կանոնները») պահանջների լիարժեք կատարումը,
- պաշտպանում են հաճախորդների իրավունքները և օրինական շահերը,
- սահմանում են թափանցիկ, բարեխիղճ և արդար գործառնական միջավայր,
- նպաստում են Ընկերության երկարաժամկետ կայունությանը և վստահելիությանը:

1.1.2 Կանոնակարգը կիրառվում է ոչ միայն վարկերի, այլև Ընկերության կողմից բոլոր ֆինանսական ծառայությունների մատուցման ժամանակ:

1.1.3 Սույն կանոնակարգի պահանջները պարտադիր են՝

- Ընկերության բոլոր աշխատակիցների, ներառյալ տնօրինության, մասնաճյուղերի (առկայության դեպքում) աշխատակիցների համար,
- երրորդ անձանց համար, որոնք Ընկերության անունից կամ նրա շահերի համար մատուցում են ծառայություններ և նրանց գործունեությունը ներառում է հաճախորդի հետ հաղորդակցություն կամ պայմանագրային հարաբերություններ:

1.1.4 Կանոնակարգի պահանջները պարտադիր են նաև մարքեթինգային, գովազդային և հաղորդակցական գործունեության ընթացքում:

1.2 Օրենսդրական հիմքեր

1.2.1 Ընկերությունը հաճախորդների հետ հաղորդակցման գործընթացում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, Ընկերության կանոնադրությամբ և սույն Կանոնակարգով:

1.2.2 Կանոնակարգը մշակված է հետևյալ իրավական ակտերի հիման վրա՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
- «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,
- «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք,
- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
- «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք,
- ՀՀ ԿԲ խորհրդի 28.07.2009թ.-ի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05:
- ՀՀ ԿԲ խորհրդի 04.08.2017թ.-ի թիվ 176-Ն որոշմամբ հաստատված «Երաշխավորի հետ գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/06:
- ՀՀ ԿԲ այլ նորմատիվ ակտեր, ուղեցույցներ և ցուցումներ, որոնք առնչվում են ֆինանսական ծառայությունների մատուցմանը:

1.3 Հիմնական հասկացություններ

1.3.1 Սույն Կանոնակարգում օգտագործվող տերմինները ունեն ՀՀ ԿԲ խորհրդի 28.07.2009թ.-ի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 8/05) տրված իմաստները, իսկ լրացուցիչ տերմինների դեպքում՝ հետևյալ սահմանումները.

Հաճախորդ՝ ֆիզիկական անձ, որը պատրաստվում է օգտվել կամ օգտվում է Ընկերության կողմից առաջարկվող ծառայություններից:

Վարկառու՝ Ընկերությունից Վարկ ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

Վարկատու՝ «Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ:

Վարկ կամ Սպառողական վարկ՝ պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, վարկ, փոխառություն, ֆինանսական վարձակալություն (լիզինգ) կամ որևէ այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակը ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է:

Հիփոթեքային վարկ՝ Վարկառուի կողմից տրամադրած Վարկ, փոխառություն կամ այլ ֆինանսավորում, որը տրամադրվել է հետևյալ պայմաններով՝

ա. Վարկի տրամադրման նպատակը բնակարան ձեռք բերելը, կառուցելը, վերակառուցելը, վերանորոգելը, բարեկարգելը կամ արդիականացնելն է, և

բ. Վարկի վերադարձելիությունն ապահովված է այդ բնակարանի հիփոթեքով կամ կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանի հիփոթեքով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 270-րդ հոդվածին համապատասխան, կամ բնակարանի կառուցման համար նախատեսված հողամասի, անավարտ շինարարության և գրավատուին պատկանող շինարարության համար ձեռք բերված նյութերի ու սարքավորումների հիփոթեքով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 271-րդ հոդվածին համապատասխան, կամ կրեդիտավորողից և կրեդիտառուից անկախ պատճառներով ձեռք բերվող, կառուցվող, վերակառուցվող, վերանորոգվող կամ արդիականացվող բնակարանը գրավադրելու անհնարինության դեպքում՝ այլ գրավով՝ պայմանով, որ գրավադրումը բացառող պայմանների վերացման դեպքում կգրավադրվի ձեռք բերվող, կառուցվող, վերակառուցվող, վերանորոգվող կամ արդիականացվող բնակարանը, և

գ. Վարկը տրամադրվել է որոշակի հատուցման դիմաց:

Սույն Կանոնակարգի իմաստով Հիփոթեքային վարկ են համարվում նաև սույն կետում նշված Վարկերի վերաֆինանսավորման նպատակով Վարկառուներին տրամադրված Վարկերը կամ փոխառությունները:

Վարկային պայմանագիր՝ կողմերի միջև կնքված պայմանագիր, որը սահմանում է Վարկի տրամադրման և մարման պայմանները:

Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման պայմանագիր (այսուհետ՝ նաև Հիփոթեքային պայմանագիր կամ Հիփոթեքային կրեդիտավորման պայմանագիր)՝ պայմանագիր, որով Վարկատուն Հաճախորդին տրամադրում կամ պարտավորվում է տրամադրել բնակարանային Հիփոթեքային վարկ:

Քաղվածք՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ կամ «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ:

Այլ վճարներ՝ բոլոր այն վճարները, որոնք Հաճախորդը պարտավոր է կատարել ֆինանսական ծառայության գծով մինչև պայմանագիր կնքելը, պայմանագրի գործողության ընթացքում և պայմանագրի դադարեցման ժամանակ, բացառությամբ տոկոսագումարների և այն վճարների, որոնք առաջանում են պայմանագրի պայմանների խախտման արդյունքում:

Ծառայության ընդհանուր պայմաններ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ ծառայության գծով բոլոր Հաճախորդների համար կիրառելի՝ ծառայության ստանդարտ պայմանները, Ընկերության և Հաճախորդի միջև հարաբերությունների ընդհանուր սկզբունքները, Ընկերության և Հաճախորդի հաղորդակցման կանոնները, Ընկերության և Հաճախորդի միջև կատարվող գործարքների ընդհանուր պայմանները (օրինակ՝ Ընկերության կողմից ծառայությունների համար կիրառվող սակագներ, վարկավորման ընդհանուր պայմաններ):

Սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ (այսուհետ՝ Անհատական թերթիկ)՝ փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ Վարկի, Հիփոթեքային վարկի գծով Վարկային պայմանագրի կնքման դեպքում տվյալ Հաճախորդի համար կիրառելի՝ Վարկի, Հիփոթեքային կրեդիտի էական պայմանները, սակագները, Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները և պարտականությունները ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները:

Վարկային դիմում-հայտ՝ Վարկի, Հիփոթեքային վարկի ստացման համար Հաճախորդի կողմից Վարկատուին գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային ձևով ներկայացված հայտ (դիմում):

Մտածելու ժամանակ՝ Հաճախորդի իրավունքը առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7/յոթ/ աշխատանքային օրվա ընթացքում:

Համակցված ծառայություն՝ այն ծառայությունն է, որն առաջարկվում է հիմնական ֆինանսական ծառայության հետ միասին՝ մեկ փաթեթով: Համակցված ծառայությունները հիմնական ծառայություններից առանձին մատուցման դեպքում ունենում են այլ պայմաններ:

Օժանդակ ծառայություն՝ այն ծառայությունն է, որն առաջարկվում է հիմնական ֆինանսական ծառայության հետ միաժամանակ, որպես առանձին ծառայություն:

Հիմնական ֆինանսական ծառայություն՝ այն ծառայությունն է, որն առաջնային առաջարկվել է Հաճախորդին կամ որը ստանալու համար վերջինս դիմել է Ընկերության:

Տարեկան անվանական տոկոսադրույք՝ Վարկառուի կողմից վճարվող փոխհատուցման տոկոսը՝ Վարկի հիմնական գումարի նկատմամբ հաշվարկված տարեկան չափով:

Տարեկան փաստացի տոկոսադրույք (ՏՓՏ)՝ Վարկի իրական արժեքը՝ հաշվի առնելով բոլոր վճարները, տոկոսները և ծախսերը ամբողջ ժամկետի համար: ՏՓՏ-ն հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի հաստատած կարգի համաձայն և արտահայտվում է տարեկան տոկոսով:

Գրավ՝ գույք կամ իրավունք, որը գրավադրվում է Ընկերությանը որպես ապահովում Վարկի վերադարձի նպատակով: Կարող է լինել անշարժ, շարժական գույք և ՀՀ օրենսդրությամբ չարգելված գրավի այլ տեսակներ:

Վարկի ժամկետ՝ Վարկային պայմանագրով նախատեսված ամբողջական ժամանակահատված, որի ընթացքում Վարկառուն պարտավոր է վերադարձնել վարկի հիմնական գումարն ու հաշվարկված տոկոսագումարները:

Վարկային քաղաքականություն՝ Ընկերության կողմից սահմանված ներքին փաստաթուղթ, որը կարգավորում է վարկային գործունեության հիմնական ուղղությունները, վարկավորման չափորոշիչները, գնային քաղաքականությունը, ռիսկերի կառավարումը և լիազորությունների բաշխումը:

Ընկերության աշխատակից՝ այն անձը, որը պաշտոնապես Ընկերության հետ կնքել աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր և գործունեությամբ անմիջականորեն ներգրավված է Հաճախորդների սպասարկման գործընթացում և գործում է Ընկերության անունից կամ նրա հանձնարարությամբ:

Վարկային բյուրո (ԱՔՌԱ)՝ ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ վարկային բյուրոն բաժնետիրական ընկերություն է, որն իրավունք ունի վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին ՀՀ օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված լիցենզիայի հիման վրա իրականացնելու վարկային տեղեկատվության, դրա համար անհրաժեշտ այլ տվյալների հավաքման, վարկային պատմությունների մշակման, ձևավորման և պահպանման, դրանց հիման վրա վարկային զեկույցի պատրաստման գործունեություն:

Երաշխավոր՝ Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով, երաշխավորության պայմանագրով, Ընկերության առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել Վարկառուի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի չկատարելու համար:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

2.1 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցման ժամանակ պահպանվում են հաղորդակցման հետևյալ ընդհանուր սկզբունքները՝

2.1.1 Ընկերության կողմից տեղեկատվությունը տրամադրվում է հայերեն լեզվով, եթե Հաճախորդը այլ լեզու չի ընտրել՝ Ընկերության կողմից այլ լեզուներով տեղեկատվության տարամադրման հնարավորություն առաջարկվելու դեպքում:

2.1.2 Ընկերության կողմից տեղեկատվությունը Հաճախորդին տրամադրվում է հնարավորինս հասկանալի կերպով, այն պետք է պարունակի վերջինիս համար հնարավորինս հասկանալի եզրույթներ, արտահայտություններ, չլինի ապակողմնորոշող, շփոթեցնող:

2.1.3 Ընկերությունն ապահովում է, որ տրամադրվող տեղեկատվությունը Հաճախորդին հնարավորություն տա հասկանալու իրեն առաջարկվող կոնկրետ ծառայության էությունը և դրա հետ կապված ռիսկերը:

2.1.4 Ընկերության կողմից տրամադրվող տեղեկատվությունը չպետք է ներկայացնել այնպիսի ձևով, որ թաքցվեն կարևոր դրույթները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի, որ դրանք ոչ կարևոր են:

2.1.5 Ընկերությունը չի կարող չափազանցնել իր կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունը՝ տրամադրելով կեղծ, ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն:

2.1.6 Ընկերության կողմից տրամադրվող տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ, արժանահավատ և ներկայացվի ժամանակին:

2.1.7 Ընկերությունն ապահովում է, որ Հաճախորդին վերաբերող տեղեկատվությունը կամ նրան տրամադրվող փաստաթղթերը հասանելի չլինեն այլ՝ երրորդ անձանց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2.1.8 Ընկերությունն չպետք է վարկաբեկի այլ ֆինանսական կազմակերպությանը, չպետք է ձևավորի բացասական վերաբերմունք Հաճախորդի մոտ ֆինանսական համակարգի և դրա կարգավորումների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցումը մինչև պայմանագրի կնքումը

3.1.1 Նախքան պայմանագրի կնքումը Ընկերության աշխատակիցը՝ բանավոր պարզաբանում է Հաճախորդին հետաքրքրող ծառայության բնույթը, էական պայմանները՝ ծառայության գինը (տոկոսադրույք, ապահովագրավճար և այլն), ժամկետները, ծառայության տրամադրման հետ կապված ծախսերի, պարտադիր այլ վճարների առաջացման դեպքերը և ծավալները, կիրառվող պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերը, հիմնական ռիսկերը, օրինակ՝ այն ռիսկերը, որոնք առաջանում են Հաճախորդի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ժամանակ, արտարժույթային տատանման ժամանակ պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները և այլն:

3.1.2 Մինչև պայմանագրի կնքելը Ընկերության աշխատակիցը Հաճախորդին հնարավորություն և բավարար ժամանակ է ընձեռում ծանոթանալու պայմանագրի դրույթներին:

3.1.3 Ընկերության աշխատակիցը բանավոր ներկայացնում է Հաճախորդի համար հետաքրքրություն առաջացրած ծառայությանը համարժեք այլ ծառայությունները:

3.1.4 Ընկերության աշխատակիցը բանավոր տեղեկացնում է Հաճախորդին պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու վերջինիս իրավունքի մասին, ինչպես նաև այն մասին, որ Հաճախորդն իրավունք ունի ընտրել նշված տեղեկատվության ստացման այլ եղանակ (օրինակ՝ փոստային կապ, հեռախոս, կարճ հաղորդագրություն, Ընկերության տարածքում՝ առձեռն և այլն):

3.1.5 Ընկերության աշխատակիցը բանավոր տեղեկացնում է Հաճախորդի կողմից Մտածելու ժամանակից օգտվելու վերջինիս իրավունքի և օգտվելու ընթացակարգի վերաբերյալ, եթե, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների, Հաճախորդն իրավունք ունի տվյալ պայմանագրի շրջանակներում օգտվել Մտածելու ժամանակից:

3.1.6 Ընկերության աշխատակիցը բանավոր բացատրում է վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի (կիրառելու դեպքում) էության և դրա կարևորության, կիրառվող սքորի տեսակի (Աքրա, Ֆայկո, սեփական սքոր գնահատական, թե այլ), սքորի վրա ազդող հիմնական գործոնների մասին:

3.1.6.1 Ընկերության աշխատակիցը ներկայացնում է նաև տեղեկատվություն սքոր գնահատականի վրա վարկային հարցման ազդեցության վերաբերյալ՝ հստակ նշելով սքորի տեսակը և գործողության ազդեցության ուղղությունը: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը պետք է ներկայացվի նախքան հարցման կատարման համաձայնության ստացումը:

3.1.7 Ընկերության աշխատակիցը բանավոր տեղեկացնում է Վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու սպառողի իրավունքի մասին՝ պարզաբանելով «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը, իսկ Հիփոթեքային վարկերի դեպքում՝ «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը: Ընդ որում, հատուկ շեշտադրվում է ժամկետից շուտ պարտավորությունները կատարելու դեպքում Հաճախորդի կրեդիտավորման ծախսից նվազեցման ենթակա և ոչ ենթակա վճարները: Հիփոթեքային կրեդիտների դեպքում բանավոր տեղեկացնում է սպառողին «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վաղաժամկետ մարման ձևի, ընտրության հնարավորության, ինչպես նաև կիրառվող տույժ/տուգանքների և օրենքով սահմանված այլ անբարենպաստ հետևանքների մասին:

3.1.8 Հիփոթեքային վարկերի դեպքում Ընկերության աշխատակիցը Հաճախորդին բանավոր տեղեկացնում է նաև «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված սպառողի իրավունքների մասին:

3.1.9 Վարկային դիմում-հայտի վերաբերյալ դրական որոշման կայացումից հետո տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն Կանոնակարգ 8/05-ի պահանջների:

3.1.10 Ընկերության ծառայություններից օգտվելու հայտ ներկայացնելիս Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է գրավոր տեղեկատվություն Վարկային բյուրոյից Հաճախորդի մասին կատարվող հարցումների վերաբերյալ, որն ներառում է Կանոնակարգ 8/05-ով սահմանված տեղեկությունները:

3.1.11 Յուրաքանչյուր անգամ Հաճախորդի վերաբերյալ վարկային հարցում կատարելիս, եթե այդ հարցումը ազդելու է վարկային սքոր գնահատականի վրա (Ֆայկո, Աքրա կամ սեփական սքոր), ապա Ընկերությունը Հաճախորդին հայտնում է այդ մասին հարցումը կատարելուց հետո առավելագույնը 2/երկու/ աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Կանոնակարգ 8/05-ի պահանջների:

3.1.12 Այն դեպքում, երբ Ընկերությունը ծառայության մատուցումն իրականացնում է հեռահար (նման եղանակով ծառայությունների մատուցման հնարավորության առկայության դեպքում)՝ էլեկտրոնային եղանակով և չի կարող ապահովել մինչև պայմանագրի կնքումը Հաճախորդի հետ բանավոր հաղորդակցումը, ապա Ընկերությունը սույն Կանոնակարգով և Կանոնակարգ 8/05-ով սահմանված տեղեկատվությունը հասանելի է դարձնում Հաճախորդներին հեռահար եղանակներով (օրինակ՝ ինտերնետային կայքում տեսաձայնագրության կամ այլ միջոցներով):

3.1.13 Այն դեպքում, երբ Ընկերությունը իր ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրից դուրս՝ երրորդ անձանց միջոցով, Ընկերությունը ապահովում է երրորդ անձի միջոցով սույն

կանոնակարգով և Կանոնակարգ 8/05-ով սահմանված պահանջներին համապատասխան տվյալ ծառայության վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը և տրամադրումը Հաճախորդին: Ընդ որում, երրորդ անձը Ընկերության կողմից ստացված տեղեկատվությունը բացահայտում և տրամադրում է Հաճախորդին:

3.1.14 Եթե Ընկերությունը հրաժարվում է ծառայություն մատուցել ծառայությունից օգտվելու գրավոր դիմում (հայտ, պահանջ) ներկայացրած Հաճախորդին, ապա այդ մասին որոշումը կայացնելուց հետո առավելագույնը 2/երկու/ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը գրավոր (թղթային կամ էլեկտրոնային եղանակով) հայտնում է Հաճախորդին՝ մանրամասն նշելով նաև մերժման պատճառները և Հաճախորդի պահանջով վերջինիս հետ է վերադարձնում այն փաստաթղթերի բնօրինակները, որոնք Հաճախորդը ձեռք էր բերել երրորդ անձանցից՝ ծառայության ստացման նպատակով Ընկերությանը ներկայացնելու համար (օրինակ՝ տեղեկանք բնակության վայրից կամ աշխատավայրից, գույքի գնահատման ակտ, նոտարական վավերացմամբ փաստաթուղթ և այլն):

3.1.15 Եթե Ընկերությունը հիմնական ծառայության մատուցմանը միաժամանակ առաջարկում է որևէ Համակցված կամ Օժանդակ, կամ բոնուսային (խրախուսական) ծառայություն, ապա Համակցված, կամ Օժանդակ, կամ բոնուսային ծառայության մասին հաղորդակցման ժամանակ Ընկերությունը պահպանում է սույն Կանոնակարգով և Կանոնակարգ 8/05-ով սահմանված հաղորդակցման կանոնները, ինչպես նաև սպառողին տեղեկացնում է Օժանդակ կամ բոնուսային ծառայությունից հրաժարվելու իրավունքի մասին:

3.1.16 Հաճախորդի Վարկային դիմում-հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո Վարկառուն իր կողմից առաջարկվող Վարկի պայմանների և Հաճախորդի կողմից տրված փաստաթղթերի հիման վրա նախքան Վարկային պայմանագրի, Հիփոթեքային վարկի պայմանագրի կնքումը Հաճախորդին տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն Կանոնակարգ 8/05-ի պահանջների և ձևանմուշների: Հիփոթեքային վարկերի դեպքում Անհատական թերթիկը Հաճախորդին տրամադրվում է նաև որպես «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գրավոր առաջարկ՝ օֆերտան, եթե անհատական թերթիկի հետ միասին ներկայացվել է նաև Վարկային պայմանագրի նախագիծը:

3.1.17 Ընկերության աշխատակիցը՝

1. ապահովում է Անհատական թերթիկում ներառված պայմանների համապատասխանությունը Վարկային պայմանագրի դրույթներին՝ բացառությամբ Տարեկան փաստացի տոկոսադրույքի, որը մարման ժամանակացույցի և (կամ) փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված կարող է տարբերվել, իսկ արտարժույթային գյուղատնտեսական վարկերի, Հիփոթեքային վարկերի դեպքում նաև փոխարժեքի, որը ամսաթվից կախված կարող է փոփոխվել,

2. ապահովում է Անհատական թերթիկի տրամադրումը ժամանակին, այսինքն՝ մինչև Վարկային պայմանագրի կնքումը Հաճախորդը հնարավորություն է ունենում ծանոթանալու Վարկի կամ Հիփոթեքային վարկի էական պայմաններին,

3. բանավոր պարզաբանում է Անհատական թերթիկի էությունը և դրա կարևորությունը,

4. բանավոր տեղեկացնում է Անհատական թերթիկի գործողության ժամկետի վերաբերյալ,

5. Անհատական թերթիկի ստորագրման ժամանակ որևէ կերպ չի ուղղորդում Հաճախորդին, սակայն, կարող է ներկայացնել Հաճախորդին ստորագրությունների քանակը,

6. բանավոր պարզաբանում է Անհատական թերթիկի և Վարկային պայմանագրի միջև հնարավոր տարբերությունների վերաբերյալ՝ պայմանավորված մարման ժամանակացույցի և 3.3.1.18 Վարկատուն հաստատված պայմանների հիման վրա լրացնում է Անհատական թերթիկը, ստորագրում է և Հաճախորդի նախընտրած եղանակով (առձեռն՝ Ընկերության տարածքում, փոստային կապի միջոցով, էլեկտրոնային փոստով) տրամադրում կամ ուղարկում է վերջինիս:

3.1.19 Փոստային կապի միջոցը կամ էլեկտրոնային փոստը ընտրելու դեպքում Վարկատուն Անհատական թերթիկը Հաճախորդին (Երաշխավորին (առկայության դեպքում)) ուղարկում է Վարկային դիմում-հայտի հաստատումից հետո 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.20 Ընկերության տարածքում առձեռն եղանակով ընտրելու դեպքում Վարկատուն Անհատական թերթիկը տրամադրում է Հաճախորդին (Երաշխավորին (առկայության դեպքում)) վերջինիս՝ Ընկերության տարածք առաջին իսկ այցի դեպքում: Եթե առձեռն եղանակն ընտրելու դեպքում Հաճախորդը (Երաշխավորը (առկայության դեպքում)) չի այցելում Ընկերության տարածք կամ այցելում է, սակայն, հնարավոր չի լինում նույնականացնել Հաճախորդին (Երաշխավորին) և Վարկատուի մոտ առկա է էլեկտրոնային փոստի հասցե, ապա Վարկատուն ուղարկում է Անհատական թերթիկի էլեկտրոնային տարբերակը:

3.1.21 Ընկերությունը առնվազն 3/երեք/ տարի պահպանում է Անհատական թերթիկի տրամադրման փաստն ապացուցող փաստաթղթերը (օրինակ՝ սպառողի ստորագրությամբ տրված ստացականը, նամակն ուղարկելու փաստն ապացուցող փաստաթուղթը, էլեկտրոնային փոստի ծանուցման հաղորդագրությունը):

3.1.22 Եթե Հաճախորդի (Երաշխավորի (առկայության դեպքում)) համար հասկանալի է Անհատական թերթիկում ներառված տեղեկատվությունը և նա համաձայն է Անհատական թերթիկի հետ, ապա ստորագրում է Անհատական թերթիկների 2/երկու/ (Երաշխավորի առկայության դեպքում՝ 3/երեք/) օրինակները և վերադարձնում Վարկատուին առձեռն՝ Ընկերության տարածքում կամ էլեկտրոնային եղանակով (օրինակ՝ գործող էլեկտրոնային փոստով):

3.1.23 Ստորագրված Անհատական թերթիկներից մեկ օրինակը տրամադրվում է Հաճախորդին, իսկ մյուսը ենթակա է արխիվացման Վարկատուի կողմից: Երաշխավորի առկայության դեպքում Անհատական թերթիկներից երրորդ օրինակը տրամադրվում է Երաշխավորին:

3.1.24 Անհատական թերթիկի պայմանները գործում են Վարկային դիմում-հայտի դրական որոշման վերաբերյալ Հաճախորդին տեղեկացնելուց հետո 10/տաս/ աշխատանքային օր: Այն դեպքում, երբ Հաճախորդը (Երաշխավորը առկայության դեպքում) ցանկանում է անմիջապես ստորագրել Անհատական թերթիկը, ապա Ընկերության աշխատակիցը բավարար ժամանակ է ընձեռում Հաճախորդին (Երաշխավորին (առկայության դեպքում)), որպեսզի մանրամասն կարդա Անհատական թերթիկը:

3.1.25 Անհատական թերթիկում տվյալները լրացվում են Կանոնակարգ 8/05-ի լրացման ուղեցույցի օգնությամբ:

3.2 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցումը պայմանագրի կնքման ընթացքում, Վարկային պայմանագրում ներառվող նվազագույն տեղեկատվությունը

3.2.1 Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող պայմանագրերում ներառվող տեղեկատվությունը ներկայացվում է առնվազն 9/ինը/ տառաչափով, իսկ տողերի միջև հեռավորությունը՝ առնվազն 1/մեկ/:

3.2.2 Ընկերությունն ապահովում է, որ Հաճախորդի հետ կնքվող պայմանագրերում առկա լինի նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը՝

➤ նշում այն մասին, որ Հաճախորդը հնարավորություն ունի Ընկերության և Հաճախորդի միջև կնքվող գործարքից բխող բոլորք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ համաձայն Կանոնակարգ 8/05-ի պահանջների:

➤ պայմանագրին կից տրամադրվում է «Ի՞նչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշմամբ հաստատված «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04-ի :

- պայմանագրի առաջին էջում աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով և (կամ) այլ ձևով ներկայացվում է Ընկերության կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն):
- 3.2.3 Ընկերությունը ապահովում է, որ Վարկային պայմանագիրը, բացի սույն Կանոնակարգով, Կանոնակարգ 8/05-ով և «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ահմանված տեղեկատվությունից, ներառի նաև՝
 1. Վարկի տեսակը,
 2. Վարկի գումարի չափը,
 3. Վարկի վերադարձման վերջնաժամկետը,
 4. Վարկի գումարի տրամադրման ձևը (միանվագ կամ փուլային), Վարկը մարելու ժամանակացույցը, որը ներառում է՝
 - Վարկի մայր գումարի մարման ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ) և ընդհանուր գումարը,
 - տոկոսագումարների վճարների ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ) և տոկոսագումարների ընդհանուր գումարը,
 - տոկոսագումարներից բացի այլ վճարների ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ), վճարման կարգ և այդ վճարների ընդհանուր գումարը: Եթե Հաճախորդի կողմից կատարվելիք վճարների չափը կարող է փոփոխվել, ապա Վարկը մարելու ժամանակացույցը կազմելիս ենթադրվում է, որ այդ վճարների չափը կմնա անփոփոխ:
 5. Վարկի տրամադրման եղանակը,
 6. Եթե Վարկային պայմանագրի հետ կապված Վարկատուն Հաճախորդին մատուցում է այլ ծառայություններ, ապա՝ նշում այդ ծառայությունների դիմաց գանձվող վճարների և դրանց մեծության մասին,
 7. տոկոսագումարների հաշվարկման կարգը (նաև արտոնյալ ժամանակահատվածի առկայության դեպքում), իսկ արտարժույթային Վարկերի դեպքում նշվում է նաև Փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվող գումարները արտարժույթի փոխարկման փոխարժեքի մասին,
 8. Վարկի գումարի մարման կարգը՝ հավասարաչափ (անուիտետային), թե ոչ հավասարաչափ (դիֆերենցված),
 9. նշում այն մասին, որ Հաճախորդը վճարելու է ապահովագրության, գնահատման կամ այլ օժանդակ ծառայությունների համար կամ նոտարական ծառայությունների համար կամ կատարելու է այլ վճարներ, եթե Վարկատուին հայտնի է, որ Հաճախորդը կատարելու է նման վճարներ,
 10. եթե Ընկերությունը Հաճախորդից կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, ապա նշում այդ մասին,
 11. նշում Հաճախորդի պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների մասին, եթե այդպիսիք առկա են,
 12. եթե Հաճախորդի պարտավորությունների կատարումն ապահովված է գրավով, ապա՝
 - գրավի տեսակը և նկարագրությունը,
 - Վարկի գումարի և գրավի արժեքի տոկոսային հարաբերակցությունը, վերջինիս փոփոխման դեպքերը (օրինակ՝ գրավի վերագնահատման ժամանակ, մի քանի գրավների առկայության դեպքում՝ գրավի ազատման ժամանակ) և այդ մասին Հաճախորդին տեղեկացնելու կարգը, ժամկետները,
 - նշում այն մասին, որ գրավի առարկան անցնում է կամ չի անցնում գրավառուի տիրապետմանը,
 - նշում այն մասին, որ Հաճախորդի կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում գրավի առարկայի վրա կարող է բռնագանձում տարածվել,
 - Վարկային պայմանագրով գրավը արտադատական կարգով իրացնելու իրավունք նախատեսելու դեպքում նշվում է Հաճախորդի համար հնարավոր ծախսերի վերաբերյալ:
- 13. Վարկի տոկոսադրույքի չափը, իսկ եթե տոկոսադրույքը կարող է փոփոխվել, ապա՝ տոկոսադրույքը փոփոխելու հստակ պայմաններն ու կարգը, տոկոսադրույքի փոփոխությունը պայմանավորող գործոնները (օրինակ՝ հաշվարկային դրույք, փոխարժեք և այլն), փոփոխության

չափը պայմանավորող չափանիշները (օրինակ՝ հաշվարկային դրույքի 2/երկու/ տոկոսային կետով բարձրացումը, արժույթի 10% արժեզրկումը և այլն), փոփոխության չափը հաշվարկելու կարգը, ինչպես նաև այն, թե որտեղից Հաճախորդը կարող է տեղեկանալ տոկոսադրույքի կամ դրա հիմքում ընկած գործոնի մեծության մասին,

14. Եթե Վարկային պայմանագրով Վարկի գումարի մեծությունը կարող է փոփոխվել, ապա պայմանագրում նշվում են Վարկի գումարի մեծությունը փոփոխելու հստակ պայմաններն ու կարգը, փոփոխությունը պայմանավորող գործոնները (օրինակ՝ փոխարժեք), փոփոխության չափը պայմանավորող չափանիշները (օրինակ՝ արժույթի 10% արժեզրկումը), փոփոխության չափը հաշվարկելու կարգը, ինչպես նաև այն, թե որտեղից Հաճախորդը կարող է տեղեկանալ Վարկի գումարի կամ դրա հիմքում ընկած գործոնի մեծության մասին,

15. Հաճախորդի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Վարկատուի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցների և դրանց չափերի վերաբերյալ նշումներ, ինչպես նաև Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը Վարկային բյուրոյին տրամադրելու վերաբերյալ: Ընդ որում, Վարկային բյուրոյի վերաբերյալ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով և (կամ), այլ ձևով,

16. Եթե տրամադրվում է արտարժույթային Վարկ, նշում արտարժույթի տեսակի (օրինակ՝ դոլար, եվրո), արտարժույթի կիրառվող փոխարկման փոխարժեքի մասին, ինչպես նաև այն մասին, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ կրեդիտի մարումների վրա,

18. Եթե Վարկային պայմանագրում սահմանված են պայմաններ, որոնք որոշվում են այլ փաստաթղթով սահմանված ծառայության ընդհանուր պայմաններով և այդ ծառայության ընդհանուր պայմանները կարող են փոփոխվել Վարկային պայմանագրի գործողության ընթացքում, ապա պայմանագրում պետք է լինի նշում այդ մասին,

19. Եթե պայմանագրում հղում է կատարվում պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններին (օրինակ՝ ներքին իրավական ակտերին, ծառայության ընդհանուր պայմաններին), ապա առնվազն նշվում է այդ պայմանների նույնականացման տվյալները՝ պայմանների լրիվ անվանումը, պայմանների ընդունման ամսաթիվը, նույնականացման կամ հաշվառման համարը և ընդունող մարմնի անվանումը: Այն դեպքում, երբ հղում է կատարվում այլ մարմնի կողմից հաստատված պայմաններին և հնարավոր չէ նշել նույնականացման տվյալներ, ապա առնվազն նշվում է այն ժամկետը, որի համար գործում են այդ պայմանները: Եթե պայմանագրում նշված պայմանները հրապարակային են, ապա հղում է կատարվում նաև համապատասխան աղբյուրին (ինտերնետային էջ/բաժին/ենթաբաժին), եթե պայմանները ոչ հրապարակային են, ապա տրամադրվում է վավերացված թղթային օրինակը կամ էլեկտրոնային տարբերակը՝ հաստատող մարմնի (իրավասուի) ստորագրությամբ: Ընդ որում, նշվում են նաև այդ պայմանների փոփոխության մասին Հաճախորդներին ծանուցելու եղանակը և ժամկետները,

20. Եթե Վարկային պայմանագրում նշվում է, որ պայմանագրի պայմանները կարող են միակողմանիորեն փոփոխվել, ապա նշվում են նաև այդ մասին Հաճախորդին նախապես տեղեկացման կարգը և ժամկետները,

21. նշում Հաճախորդի վաղաժամկետ պարտավորությունները կատարելու իրավունքի, ինչպես նաև ժամկետից շուտ պարտավորությունները կատարելու դեպքում վարկավորման ընդհանուր ծախսից նվազեցման ենթակա և ոչ ենթակա վճարների վերաբերյալ, ընդ որում, այդ նշումը տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով:

3.2.4 Ընկերությունն ապահովում է, որ Հիփոթեքային վարկի պայմանագիրը, բացի Կանոնակարգ 8/05-ով, «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվությունից, ներառի նաև՝

1. Հիփոթեքային վարկի տրամադրման ձևը (միանվագ կամ փուլային),

2. տոկոսագումարների հաշվարկման կարգը, իսկ արտարժույթային Հիփոթեքային վարկերի դեպքում նշվում է նաև Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվող արտարժույթի փոխարկման փոխարժեքի մասին,

3. Հիփոթեքային վարկի գումարի մարման կարգը՝ հավասարաչափ (անուիտետային), թե ոչ հավասարաչափ (դիֆերենցված),

4. Հաճախորդի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Վարկատուի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցների և դրանց չափերի վերաբերյալ նշումներ, ինչպես նաև Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվությունը Վարկային բյուրոյին տրամադրելու վերաբերյալ: Ընդ որում, Վարկային բյուրոյի վերաբերյալ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով և (կամ), այլ ձևով,

5 եթե տրամադրվում է արտարժույթային հիփոթեքային կրեդիտ, նշում արտարժույթի տեսակի (օրինակ՝ դոլար, եվրո), արտարժույթի կիրառվող փոխարկման փոխարժեքի, ինչպես նաև այն մասին, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ Վարկի մարումների վրա,

6. եթե պայմանագրում սահմանված են պայմաններ, որոնք որոշվում են այլ փաստաթղթով սահմանված ծառայության ընդհանուր պայմաններով և այդ ծառայության ընդհանուր պայմանները կարող են փոփոխվել պայմանագրի գործողության ընթացքում, ապա պայմանագրում պետք է լինի նշում այդ մասին,

7. եթե պայմանագրում հղում է կատարվում պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմաններին (օրինակ՝ ներքին իրավական ակտերին, ծառայության ընդհանուր պայմաններին), ապա առնվազն նշվում են այդ պայմանների նույնականացման տվյալները՝ պայմանների լրիվ անվանումը, պայմանների ընդունման ամսաթիվը, նույնականացման կամ հաշվառման համարը և ընդունող մարմնի անվանումը: Այն դեպքում, երբ հղում է կատարվում այլ մարմնի կողմից հաստատված պայմաններին և հնարավոր չէ նշել նույնականացման տվյալներ, ապա առնվազն նշվում է այն ժամկետը, որի համար գործում են այդ պայմանները: Եթե պայմանագրում նշված պայմանները հրապարակային են, ապա հղում է կատարվում նաև համապատասխան աղբյուրին (ինտերնետային էջ/բաժին/ենթաբաժին), եթե պայմանները ոչ հրապարակային են, ապա տրամադրվում է վավերացված թղթային օրինակը կամ էլեկտրոնային տարբերակը՝ հաստատող մարմնի (իրավասուի) ստորագրությամբ: Ընդ որում, նշվում են նաև այդ պայմանների փոփոխության մասին Հաճախորդներին ծանուցելու եղանակը և ժամկետները,

8. Հիփոթեքային վարկի պայմանագրի գործողության ընթացքում գրավի մոնիտորինգի (ստուգման) ընթացակարգերը, պարբերականությունը և հնարավոր բացասական հետևանքները,

9. նախազգուշացում այն մասին, որ Վարկառուն կարող է գրկվել բնակարանի նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի կրեդիտավորման պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները,

10. «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված իրավունքները, վաղաժամկետ մարման ընթացակարգերը, այդ թվում՝ կիրառվող տույժ/տուգանքները և բոլոր անբարենպաստ պայմանները:

3.2.5 Հիփոթեքային վարկը մարելու ժամանակացույցը բացի «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունից ներառում է նաև՝

- Հիփոթեքային վարկի մայր գումարի մարման ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ) և ընդհանուր գումարը,
- Տոկոսագումարների վճարների ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ) և տոկոսագումարների ընդհանուր գումարը,

➤ Տոկոսագումարներից բացի Հիփոթեքային վարկավորման պայմանագրի ընթացքում Այլ վճարների վճարման ժամանակացույցը (օր/ամիս/տարեթիվ), վճարման կարգը և այդ վճարների ընդհանուր գումարը,

➤ Այն դեպքում, երբ Հիփոթեքային վարկավորման պայմանագրի ընթացքում Հաճախորդը վճարելու է ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների համար և այդ վճարների չափի մասին առկա է տեղեկատվություն, ապա նաև այդ վճարների կատարման ժամանակացույցը:

3.2.6 Այն դեպքում, երբ մեկ Վարկը տրամադրվում է մեկից ավելի անձանց, ապա Ընկերությունը Վարկային պայմանագրի մեկական օրինակ և պայմանագրի անբաժանելի մաս կազմող պայմանները՝ տրամադրում է յուրաքանչյուր Հաճախորդի:

3.3 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցումը պայմանագրի գործողության ընթացքում

3.3.1 Վարկային պայմանագրի գործողության ընթացքում Ընկերությունը Հաճախորդին տեղեկացնում է՝

1. Տարեկան անվանական տոկոսադրույքի չափի փոփոխության մասին,
2. կողմերի միջև հաղորդակցման կարգի փոփոխության մասին,
3. իրավական ակտերի այն փոփոխությունների մասին, որոնք ուղղակի ազդեցություն ունեն սպառողի՝ պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների վրա,
4. ծառայության ընդհանուր պայմանների և այլ վճարների փոփոխության մասին,
5. կողմերի՝ պայմանագրից բխող իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության վրա ուղղակի ազդեցություն ունեցող այլ հանգամանքների փոփոխության, ներառյալ՝ Վարկային բյուրո տվյալները ուղարկելու մասին:

3.3.2 Հիփոթեքային վարկավորման պայմանագրի գործողության ընթացքում Ընկերությունը, բացի «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունից, Հաճախորդին գրավոր՝ այդ թվում էլեկտրոնային եղանակով, վճարման իրականացումից առնվազն 7/յոթ/ օր առաջ տեղեկացնում է այն մասին, որ Ընկերության պահանջով Հիփոթեքային վարկի պայմանագրի ընթացքում Հաճախորդը պետք է վճարի ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների համար, և այդ վճարների կատարման ժամկետների, չափի և չկատարման դեպքում բացասական հետևանքների մասին:

3.3.3 Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Հաճախորդին տրամադրվում է էլեկտրոնային կապի միջոցով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Հաճախորդի գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա Հաճախորդին կարող է տրամադրվել գործող փոստային կամ կապի այլ միջոցով (հեռախոս, կարճ հաղորդագրություն, Ընկերության տարածքում՝ առձեռն և այլն): Ընկերությունը չի կարող ուղղորդել Հաճախորդին ծանուցման որևէ եղանակ ընտրելու հարցում կամ սահմանափակել ծանուցման եղանակ ընտրելու հնարավորությունը:

3.3.4 Այն դեպքում, երբ Վարկային պայմանագրի գործողության ընթացքում տեղի են ունենում Կանոնակրագ 8/05-ի 27-րդ կետի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված փոփոխությունները, իսկ Հիփոթեքային վարկերի դեպքում «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվության փոփոխությունները, որոնց արդյունքում փոխվում է Անհատական թերթիկում ներառված տեղեկատվությունը, ապա սպառողի գրավոր կամ բանավոր պահանջով կրեդիտավորողը տրամադրում է նոր Անհատական թերթիկ՝ Կանոնակրագ 8/05-ով սահմանված կարգով: Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված հիմքերով Վարկատուի կողմից Վարկային պայմանագրի, Հիփոթեքային վարկի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է միակողմանիորեն Վարկատուի գործող նոր պայմաններով, ինչի արդյունքում

փոխվում է Անհատական թերթիկում ներառված տեղեկատվությունը, ապա Վարկատուն տրամադրում է նոր Անհատական թերթիկ՝ Կանոնակարգ 8/05-ով սահմանված կարգով:

3.3.5 Պարտադիր ներկայացման տեղեկատվությունում Ընկերության կողմից միակողմանիորեն փոփոխություն կատարելու դեպքում փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը Հաճախորդին տրամադրվում է վերջինիս նախընտրած եղանակով համապատասխան փոփոխության որոշման կայացումից հետո, սակայն ոչ ուշ, քան որոշումն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ, բացառությամբ Վարկային բյուրո տվյալները ուղարկելու դեպքի, այլ դեպքերում՝ Պարտադիր ներկայացման տեղեկատվությունում կատարված փոփոխությունը Հաճախորդին տրամադրվում է ոչ ուշ, քան համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց և Ընկերության կողմից տեղեկանալուց 7 աշխատանքային օր հետո:

3.3.6 Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը պայմանագրի սպասարկման ընթացքում ներկայացնելիս պահպանվում են հաղորդակցման հետևյալ ընդհանուր սկզբունքները՝

➤ Ընկերությունը պարզաբանում է կատարված փոփոխությունները՝ ներկայացնելով դրանց հնարավոր ազդեցությունները,

➤ Ընկերությունը տրամադրում է այն կապի միջոցները (հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե), որոնցով Հաճախորդը կկարողանա լրացուցիչ տեղեկություններ ստանալ Պարտադիր ներկայացման տեղեկատվության մասին,

➤ Ընկերությունը պարտադիր ներկայացման տեղեկատվությունն այնպես է ներկայացնում, որ տեղեկատվության կարևոր հատվածներում ակնհայտ լինեն առանձնացված կոնկրետ վերնագրեր, իսկ տեքստի առավել կարևոր մասերում առկա լինեն շեղատառեր կամ ավելի մեծ տառաչափեր:

3.3.7 Ընկերությունն առնվազն մեկ տարի պահպանում է Հաճախորդին Պարտադիր ներկայացման տեղեկատվության տրամադրման հիմքերը՝ էլեկտրոնային փոստով ծանուցման հաղորդագրություն, առաքման անդորրագիր, հեռախոսազանգի ձայնագրություն, առձեռն տրամադրման վերաբերյալ ստացական և այլն:

3.3.8 Այն դեպքերում, երբ Ընկերությունը Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը հաղորդում է հեռախոսով, Ընկերության աշխատակիցը՝

1. բացահայտում է իր անունը, ինչպես նաև Ընկերության անվանումը,

2. մատչելի և գրական հայերենով, եթե կողմերի համաձայնությամբ այլ լեզվով հաղորդակցում նախատեսված չէ, հաղորդում է զանգահարելու նպատակը,

3. տեղեկացնում է հեռախոսային խոսակցության ձայնագրման մասին, եթե այն ձայնագրվում է,

4. Հաճախորդի ցանկության դեպքում ընդհատում է հեռախոսային խոսակցությունը և Հաճախորդին զանգում ավելի ուշ:

3.3.9 Հաճախորդի պարտավորության կատարման օրից առնվազն 1/մեկ/ օր առաջ Ընկերությունը պարտավոր է Հաճախորդին հայտնել մարման ենթակա պարտավորության առկայության մասին, ինչպես նաև այդ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով Վարկային բյուրոյին և Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին տրամադրելու մասին: Ֆինանսական կազմակերպությունը վերոնշյալ տեղեկատվությունը Հաճախորդին հայտնում է անվճար՝ կարճ հաղորդագրության (SMS) և (կամ) էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է վերոնշյալ եղանակներից որևէ մեկը ընտրելու հնարավորություն:

3.3.10 Այն դեպքում, երբ Վարկի, Հիփոթեքային վարկի մարման ժամանակացույցում տեղի են ունենում փոփոխություններ՝ կապված Հաճախորդի կողմից Վարկի, Հիփոթեքային վարկի վաղաժամկետ մարման, տոկոսադրույքի փոփոխման և այլ հանգամանքների հետ, ապա Ընկերությունը Հաճախորդի ցանկության դեպքում առավելագույնը 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդի նախընտրած եղանակով (առձեռն, գործող էլեկտրոնային փոստ, այլ) անվճար տրամադրում է Վարկի, Հիփոթեքային վարկի մարման նոր ժամանակացույցը: Փոստային կապի ընտրության դեպքում՝ Վարկի, Հիփոթեքային վարկի մարման նոր ժամանակացույցը տրամադրվում է 3-5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4 Պայմանագրի գործողության ընթացքում Հաճախորդին տրամադրվող քաղվածքները

3.4.1 Ընկերության կողմից Հաճախորդներին «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» և «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքներով սահմանված կարգով, ըստ ծառայության տեսակի տրամադրվում են Քաղվածքներ՝ համաձայն Կանոնակարգ 8/05-ի պահանջների:

3.4.2 Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է միայն այն ծառայության (ծառայությունների) վերաբերյալ Քաղվածք, որից վերջինս օգտվում է:

3.4.3 Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է Ընկերության կողմից առաջարկվող լեզուներից սպառողի ընտրած լեզվով քաղվածք: Այն դեպքում, երբ Հաճախորդն Ընկերության կողմից առաջարկվող տարբերակներից Քաղվածքի ստացման այլ լեզու չի ընտրել, ապա Հաճախորդին տրամադրվում է առնվազն հայերեն լեզվով Քաղվածք:

3.4.4 Էլեկտրոնային եղանակով քաղվածքի տրամադրման դեպքում, Ընկերությունն ապահովում է, որ՝

1. Քաղվածքը ուղեկցող հաղորդագրությունն առնվազն պարունակի Ընկերության կողմից առաջարկվող տարբերակներից Հաճախորդի նախընտրած լեզվով Հաճախորդի անուն ազգանունը, Քաղվածքում ընդգրկված ժամանակահատվածը, այն ծառայության անվանումը, որի համար տրամադրվում է Քաղվածքը և հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե, որոնցով Հաճախորդը կարող է սպառիչ տեղեկատվություն ստանալ Քաղվածքի հետ կապված հարցերի վերաբերյալ: Հաղորդագրությունում նշվում է նաև այն մասին, որ Հաճախորդը պետք է մանրամասն ուսումնասիրի իր Քաղվածքը՝ ստուգելու դրանում ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը,

2. Քաղվածքի հասանելիությունը խոչընդոտող տեխնիկաձրագրային սահմանափակումներ չլինեն և քաղվածքը էլեկտրոնային նամակին կցված լինի Հաճախորդի նախընտրած ձևաչափով: Այն դեպքում, եթե սպառողի նախընտրությունը հնարավոր չի պարզել, ապա էլեկտրոնային նամակին քաղվածքը կցվում է առնվազն «.xls» («.xlsx») ձևաչափով,

3. Քաղվածքի էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային նամակի անվանումը («առարկա» տողը) պարունակի «statement» կամ «քաղվածք» բառը, հաշվետու ժամանակահատվածը, ծառայության տեսակը, որի համար ուղարկվում է քաղվածքը, արժույթը, վճարային քարտի դեպքում նաև քարտի տեսակը, վերջին 4 թվերը, բազմարժույթային քարտի դեպքում արժույթի փոխարեն նշվում է «բազմարժույթային» կամ «multicurrency» բառը (Օրինակ՝ ՔԱՂՎԱԾՔ 01.10.15-30.10.15 ԱՎՏՈՎԱՐԿ AMD),

4. Քաղվածքի ուղարկման և ստացման ապացուցելիությունն առնվազն 1/մեկ/ տարի պատշաճ ձևերով պահպանվեն (օրինակ՝ Return receipt, Send receipt):

3.4.5 Փոստային կապի միջոցով քաղվածքի ուղարկման դեպքում, Ընկերությունն ապահովում է որպեսզի առնվազն 1/մեկ/ տարի պահպանվեն ուղարկման անդորրագիրը և (կամ) ստացման մասին հետադարձ ծանուցումը:

3.4.6 Այն դեպքում, երբ մեկ Վարկը, Հիփոթեքային վարկը տրամադրվում է մեկից ավելի անձանց, Ընկերությունը Քաղվածքի մեկական օրինակ տրամադրում է յուրաքանչյուր Հաճախորդին:

3.5 Ընկերության և հաճախորդի հաղորդակցումը Պայմանագրի գործողության դադարման ընթացքում

3.5.1 Հաճախորդի կողմից պայմանագիրը լուծելու մասին դիմում ներկայացնելու դեպքում Ընկերությունն անմիջապես Հաճախորդին տրամադրում է դիմումը ստանալու մասին հավաստում այն եղանակով, որ եղանակով ներկայացվել է դիմումը (Օրինակ՝ գրավոր թղթային դիմումի դեպքում՝ գրավոր թղթային հավաստում, էլեկտրոնային դիմումի դեպքում՝ էլեկտրոնային հավաստում): Բանավոր դիմում ներկայացնելու դեպքում Ընկերությունը Հաճախորդի ցանկությամբ տրամադրում է գրավոր թղթային կամ էլեկտրոնային հավաստում:

ԳԼՈՒԽ 4. ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿՐԳԸ

4.1 Ընկերության աշխատակիցն երաշխավորության պայմանագիր կնքելուց առաջ Երաշխավորին ծանոթացնում է երաշխավորությամբ ապահովված Վարկային պայմանագրի էական պայմաններին, Վարկառուի կողմից իր պարտականությունը չկատարելու դեպքում Երաշխավորի վարկային պատմության վատթարացման, Երաշխավորի պարտավորության, դրա չափի, Երաշխավորի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և Վարկային բյուրո տեղեկատվության տրամադրման և վեճերի լուծման մեխանիզմների վերաբերյալ:

4.1.1 Երաշխավորներ(ներ)ի կողմից Ընկերության աշխատակցի կողմից ներկայացված տեղեկատվությունը հասանելի և ընդունելի լինելու դեպքում Ընկերության աշխատակիցը վերջին(ներ)իս ստորագրությանն է հանձնում սույն Կանոնակարգի Հավելված 1-ը (Երաշխավորության տրամադրման հայտարարություն)

4.2 Ընկերության աշխատակիցն Երաշխավորին տրամադրում է երաշխավորության պայմանագրի օրինակը, ինչպես նաև երաշխավորությամբ ապահովված պարտավորության Վարկային պայմանագրի (այդ թվում վարկի մարման ժամանակացույցի) բնօրինակը կամ պատճենը՝ **«Բնօրինակի հետ ճիշտ է»** մակագրմամբ:

4.3 Ընկերությունն Երաշխավորի պահանջով երաշխավորությամբ ծագող հարաբերությունների ամբողջ ընթացքում տրամադրում է վերջինիս Վարկի մնացորդի վերաբերյալ տեղեկատվություն:

4.4 Երաշխավորության պայմանագրում կամ առանձին փաստաթղթով Երաշխավորը ձեռագրով (էլեկտրոնային եղանակով երաշխավորության պայմանագիր կնքելու դեպքում՝ էլեկտրոնային եղանակով տպագրելու միջոցով) նշում է, **«Ես՝ (անուն, ազգանուն/անվանում) երաշխավորում եմ (անուն, ազգանուն/անվանում)(.....) գումարի պարտավորությունը և գիտակցում եմ, որ վերջինիս կողմից իր պարտավորությունը չկատարելու դեպքում ես եմ դրանք կատարելու, վատանալու է իմ վարկային պատմությունը և հնարավոր է զրկվեմ իմ սեփական գույքից»:** Ընդ որում, վերոնշյալ ձեռագրով նշումը Երաշխավորը կարող է կատարել միայն այն լեզվով, որով վերջինիս տրամադրվել է երաշխավորության պայմանագիրը:

4.5 Երաշխավորի հետ հաղորդակցումը կատարվում է գրավոր ձևով:

4.5.1 Վարկատուն Երաշխավորին տրամադրում է գրավոր հաղորդակցման առնվազն երեք եղանակի ընտրության հնարավորություն (ընդ որում՝ Ընկերության տարածքում տեղեկատվության առձեռն հանձնման եղանակը չի կարող լինել միակ հաղորդակցման եղանակը) և բացատրում ընտրված միջոցով հաղորդակցման էությունը: Սույն Կանոնակարգի 4.5.2 և 4.5.5 կետերով սահմանված տեղեկությունը Վարկատուն Երաշխավորին հայտնում է վերջինիս կողմից ընտրված հետևյալ եղանակներից որևէ մեկով՝ կարճ հաղորդագրության (SMS) և (կամ) էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:

4.5.2 Վարկառուի՝ մարման ժամանակացույցով սահմանված պարտավորության կատարման օրից առնվազն 1/մեկ/ օր առաջ Վարկատուն պարտավոր է Երաշխավորին ծանուցել մարման ենթակա պարտավորության առկայության մասին:

4.5.3 Վարկատուն Երաշխավորին ուղարկում է առաջարկ կամ ծանուցում երաշխավորության և երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրերի էական պայմանների փոփոխությունների (տոկոսադրույք, միջնորդավճար, տույժ, տուգանք, ժամկետ, վարկի չափ և այլն) մասին, որը պարունակում է տեղեկատվություն էական փոփոխությունների, տվյալ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետների, իսկ օրենսդրությամբ երաշխավորի կողմից համաձայնության ստացման անհրաժեշտության դեպքում նաև՝ համաձայնեցման ձևաչափերի, ինչպես նաև չհամաձայնվելու հետևանքների մասին: Ընդ որում՝

4.5.3.1 Այն դեպքում, երբ Վարկատուն ցանկանում է փոփոխել պայմանագրերի այն էական պայմանները, որոնց արդյունքում վատթարանում են պայմանագրի պայմանները, և (կամ) ավելանում է պարտավորությունը, և երաշխավորը նախապես չի տրամադրել դրանց փոփոխության վերաբերյալ համաձայնություն, ապա Վարկատուն առնվազն 7/յոթ/

աշխատանքային օր առաջ Երաշխավորին տրամադրում է այդ փոփոխության վերաբերյալ առաջարկ:

4.5.3.2 Այն դեպքում, երբ Վարկատուն նախատեսում է փոփոխել պայմանագրի այն էական պայմանները, որոնք չեն նախատեսում պայմանագրի պայմանների վատթարացում և (կամ) պարտավորության ավելացում, ապա Վարկատուն փոփոխության վերաբերյալ ծանուցում է Երաշխավորին փոփոխությունը հաստատվելուց հետո 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում:

4.5.3.3 Այն դեպքում, երբ Վարկատուն նախատեսում է փոփոխել պայմանագրերի այն էական պայմանները (այդ թվում՝ երբ նախապես տրամադրված երաշխավորության պայմանագրի շրջանակում կնքվում են լրացուցիչ համաձայնագրեր), որոնց Երաշխավորը նախապես տրամադրել է համաձայնություն, Վարկատուն յուրաքանչյուր անգամ երաշխավորին ծանուցում է այդ փոփոխությունների մասին փոփոխությունը հաստատվելուց հետո 1/մեկ/ աշխատանքային օրվա ընթացքում:

4.5.4 Վարկատուն Երաշխավորին ծանուցում է նաև երաշխավորությամբ ապահովված պարտավորության պայմանագրի դադարեցման մասին դրա դադարեցումից հետո 7/յոթ/ աշխատանքային օրվա ընթացքում:

4.5.5 Վարկառուի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության կետանցի դեպքում Վարկատուն պետք է Երաշխավորին տեղեկացնի այդ մասին ոչ ուշ, քան կետանցի հաջորդ օրը՝ նշելով ընդհանուր պարտավորության մնացորդի չափը և դրա բացվածքը՝ առանձին պարտավորության մայր գումարը, տոկոսները, տույժերը, տուգանքները (առկայության դեպքում):

4.5.6 Վարկառուի կողմից Երաշխավորին իր պարտավորությունը կատարելու համար պահանջ ներկայացնելու դեպքում պահանջը պետք է նախատեսի այն ժամկետը, որի ընթացքում երաշխավորը պարտավոր է վճարել երաշխավորված գումարը, ընդ որում՝ այդ ժամկետը չի կարող 7/յոթ/ աշխատանքային օրից պակաս լինել:

ԳԼՈՒԽ 5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՅԹՆԵՐ

5.1 Սույն Կանոնակարգը հանդիսանում է Ընկերության կողմից վարկավորման գործընթացը կարգավորող հիմնարար ներքին կարգավորող փաստաթուղթ: Այն պարտադիր է վարկային գործունեությամբ և Հաճախորդների սպասարկմամբ զբաղվող բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև աջակցող և վերահսկող գործառույթ իրականացնող բաժինների համար: Փաստաթուղթը պարտադիր կիրառման ենթակա է Հաճախորդների սպասարկման բոլոր փուլերում:

5.2 Սույն Կանոնակարգի արդյունավետությունը և արդիականությունը վերահսկվում են Ընկերության գործադիր տնօրենի:

5.3 Եթե սույն Կանոնակարգի որևէ դրույթ հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերին կամ վերադաս քաղաքական փաստաթղթերին, ապա կիրառվում են վերջիններիս պահանջները: Այդ դեպքում Կանոնակարգը ենթակա է անհապաղ վերանայման:

5.4 Սույն Կանոնակարգը հաստատվում է Ընկերության խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից:

5.5 Ընկերության բոլոր աշխատակիցները պետք է ծանոթ լինեն փաստաթղթին, որի ապահովման նպատակով այն շրջանառվում է ներքին տեղեկատվական համակարգերով, և հարկ եղած դեպքում կազմակերպվում են վերապատրաստումներ:

5.6 Կանոնակարգի խախտման կամ չկատարելու դեպքում պատասխանատվություն են կրում տվյալ աշխատակիցները՝ Ընկերության ներքին կարգապահական կարգերի, աշխատանքային պայմանագրերի և գործող օրենսդրության համաձայն:

5.7 Ընկերության և Հաճախորդի հաղորդակցման հետ կապված ընթացակարգերը, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական

բանկի նորմատիվ իրավական ակտերով (Կանոնակարգ 8/05 և Կանոնակարգ 8/06) և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով:

5.8 Սույն Կանոնակարգը ուժի մեջ մտնելու պահից, նախկինում գործող՝ 02.04.2024թ.-ին Ընկերության խորհրդի կողմից հաստատված «Գործարար վարվելակերպի կանոնները» և 03.12.2019թ.-ին հաստատված «Երաշխավորի հետ գործարար վարվելակերպի կանոնները» համարվում են ուժը կորցրած:

